



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

---- օգոստոսի 2017 թվականի №---Ա
քաղ. Երևան

**«ՔԱՐԵ ՀՈՎԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №337Ա որոշմամբ «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիան (այսուհետ՝ №0513 լիցենզիան)՝ մինչև 2029 թվականի սեպտեմբերի 14-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատված՝ 2014 թվականի սեպտեմբերի 14-ը,

բ) 2017 թվականի հունիսի 7-ի №242Ա որոշման (այսուհետ՝ Որոշման) 1-ին կետով №0513 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2018 թվականի մայիսի 14-ը, իսկ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությանը պարտավորեցվել է №0513 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում, Հանձնաժողով ներկայացնել մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2018 թվականի հունիսի 28-ը գործողության ժամկետով,

գ) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման պարտավորությունը Որոշմամբ սահմանված ժամկետում՝ այն է մինչև 2017 թվականի հուլիսի 29-ը, Ընկերության կողմից չի կատարվել,

դ) Հանձնաժողովը, Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով

Ընկերության նկատմամբ 2017 թվականի օգոստոսի 1-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 1-ի №ԱԲ-1997ի գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2017 թվականի օգոստոսի 11-ի գրությամբ տեղեկացրել է, որ երաշխիքի ներկայացումը գտնվում է բանկային գործընթացի մեջ, ուստի Ընկերությունը պարտավորվում է յոթ աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնել Հանձնաժողով և 2017 թվականի օգոստոսի 16-ի գրությամբ ներկայացրել է,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախազգուշացնել:
2. «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ